

«Իրաքի մէջ մենք շահեր, համայնք, սրբավայրեր եւ 400էն աւելի կալուածներ ունինք, որոնց ստիպուած ենք մօտէն հետեւիլ: Առ այդ, Հայաստան պատրաստակամութիւն յայտնած է յետպատերազմեան Իրաք գործուղել երեք պիւնտրակաւ բժիշկ եւ տարւ սակարար: Այս մէկը մենք կ'ընենք շատ մտածուած ձեւով, այնպէս մը, որ ոչ Իրաքի մէջ մեր շահերուն վնասէ, ոչ ալ շրջանալին այլ պետութեանց հետ մեր յարաբերութիւններուն», յայտարարեց երէկ Հայաստանի արտաքին գործոց փոխ նախարար Ռուբէն Շուգարեան:

ԸՍՏ ՄԵԿՆԱՐԱՆՆԵՐՈՒ

ՏՈՆԱԼՏ ՌԱՄՍՖԵԼՏ ՈՒԺԻ ՅՈՒՅԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԿԱՏԱՐԷ ԹԻՔՐԻԹ ԱՅՅԵԼԵԼՈՎ

Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնալտ Ռամսֆելտ, որ Հինգշաբթի օր անակնկալօրէն Իրաք ժամանած էր, երէկ այցելեց Սատտամ Հիւսէյնի ծննդավայր Թիքրիթ, ուր հասաւ տաննեակ մը պատերազմական ուղղաթիւներով, որ ըստ մեկնարաններու ուժի ցուցադրուած թիւն է շրջանի բնակչութեան, որ ցարդ հաւատարիմ կը մնայ նախկին ղեկավարին:

Թիքրիթի մէջ, Ռամսֆելտ հանդիպում ունեցաւ շրջանին պաշտպանութեան հսկող ամերիկեան զօրամասի զինուորներուն հետ, անոնց յայտնելով որ կը յաջողին Սատտամի իշխանութեան եւ Պաշտպանական զորքերուն դէմ ձեռնարկած իրենց պայքարին մէջ հակառակ անոր որ զօհեր կ'ունենան այդ ճամբուն վրայ: Ռամսֆելտ ըսաւ նաեւ, որ ամերիկացի զինուորներուն առաջնորդութեան ղեկավարներուն հետ խորհրդակցութիւններ կ'ունենան այդ ճամբուն վրայ: Ռամսֆելտ ըսաւ նաեւ, որ ամերիկացի զինուորներուն առաջնորդութեան ղեկավարներուն հետ խորհրդակցութիւններ կ'ունենան այդ ճամբուն վրայ:

Թիքրիթի մէջ, Ռամսֆելտ հանդիպում ունեցաւ շրջանին պաշտպանութեան հսկող ամերիկեան զօրամասի զինուորներուն հետ, անոնց յայտնելով որ կը յաջողին Սատտամի իշխանութեան եւ Պաշտպանական զորքերուն դէմ ձեռնարկած իրենց պայքարին մէջ հակառակ անոր որ զօհեր կ'ունենան այդ ճամբուն վրայ:

Ռամսֆելտի Իրաք այցելութեան նպատակն է արժեւորել ապահովութեան կացութիւնը, ինչպէս նաեւ՝ թափ տալ միջազգային ուժերու հաստատման ծրագիրին, որ կ'առաջարկուի Միացեալ Նահանգներու կողմէ: Ռամսֆելտ Հինգշաբթի օր երկար հանդիպում մը ունեցած էր Իրաքի մէջ ամերիկացի քաղաքային ղլխաւոր պատասխանատու Փոլ Պրեմերի հետ: Ան հանդիպում ունեցաւ ամերիկացի բարձրաստիճան զինուորական զօր. Ռիքարտո Սանչէսի հետ: Հանդիպումին աւարտին, ամերիկացի նախարարը ըսաւ, որ զետեղ կարիքը կայ միջազգային յաւելեալ ուժերու (ոչ ամերիկեան): Ան աւելցոց, որ Պրեմեր եւ Սանչէս գիտել տուած են, թէ աշխատանք պէտք է տարրիկացի զինուորներուն



րաստիւր եւ անոնց թիւը աւելցնելու երկրին մէջ: Ռամսֆելտ նախատեսեց, որ ներկայիս գործող իրաքցի 55 հազար զինուորներուն թիւը մօտ օրէն 75 կամ հարիւր հազարի բարձրանայ:

Սանչէս երկու օր առաջ յայտնած էր, որ ներկայիս Իրաքի մէջ գործող ամերիկացի զինուորներուն թիւը բաւարար է ընթացիկ գործերուն համար, սակայն ապագայի ապահովական սպառնալիքներ իրաքցի 55 հազար զինուորներուն թիւը մօտ օրէն 75 կամ հարիւր հազարի բարձրանայ:

ներուն շուրջ, ինչպէս նաեւ՝ Նաթաֆի մէջ, ուր ակնուած ինքնաշարժի մը պայթումը 83 զոհ խլած էր անցեալ Ուրբաթ օր: Սիւննի բնակչութիւն ունեցող Ֆայլուժայի մէջ ապահովական միջոցառումներուն նպատակն էր կանխարգիլել որեւէ յարձակում, որովհետեւ շիւներ սպառնացած են սիւննիներէն վրէժ յուժել, եթէ փաստուի, թէ Նաթաֆի պայթումին մեղսակցած են:

Որդեգրուած միջոցառումները չյաջողեցան սակայն արգիլել յարձակում մը Պաղատաի սիւննի համայնքի մզկիթներէն մէկուն դէմ: Ակնատես մը յայտնեց, որ զինեալներ կրակ արձակեցին հաւատացեալներու վրայ արեւածագի ալօթքի պահուէն՝ երեք հոգի վիրաւորելով: Որեւէ շարժում չստանձնեց գործողութեան պատասխանատուութիւնը:

ՆԱԽԱԳԱՅ ՔՈՉԱՐԵԱՆ ԿԱՂԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՍՔ ԿԸ ՄԵԿՆԻ ՊՈՒԼԿԱՐԻԱ

Սեպտեմբեր 7-9, Հայաստանի նախագահ Ռուբէն Քոչարեան պաշտօնական այցելութեամբ կը մեկնի Պուլկարիա, ընդառաջելով նախագահ Կիրիլ Գարվանովի հրաւերին: Սոֆիա մեկնող պատուիրակութեան մաս կը կազմեն արտաքին գործոց, առողջապահութեան, երթուէկի եւ կապի, մշակոյթի եւ երիտասարդութեան հարցերու նախարարները, բարձրաստիճան պաշտօնատարներ եւ լրագրողներ:

Այցելութեան հիմնական նպատակն է ամրապնդել երկու երկիրներուն միջեւ գոյութիւն ունեցող միջպետական կապերը, խորացնել համագործակցութիւնը, տնտեսական յարաբերութեանց արկ տալ եւ այս իմաստով նոր ծրագիրներ մշակել:

Երկուշաբթի առաւօտ, նախագահ Քոչարեան հանդիպում կ'ունենայ պուլկարացի իր պաշտօնակիցին հետ, որմէ ետք տեղի կ'ունենան հայպուլկարական բանակցութիւնները՝ ընդլայնուած կապով: Ապա երկու երկիրներուն ղեկավարները կու տան մամլոյ միացեալ ասուլիս, ինչպէս նաեւ կը ստորագրուին համաձայնագիրներ տարբեր մարզերու մէջ:

Նախագահ Քոչարեան այլ տեսակցութիւններու կողքին պիտի այցելէ նաեւ Փլովտիւ, ուր հանդիպում մը պիտի ունենայ տեղւոյն հայ համայնքին հետ:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՈՒԺԵՐԸ ՍՊԱՆՆԵՑԻՆ ՀԱՄԱՍԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԸ ԵՒՍ

Համասի պատասխանատու մը եւ իսրայէլացի պիւնտր մը սպաննուեցան Նապլուսի մէջ, ուր իսրայէլեան ուժեր ներխուժած էին ձերբակալելու համար յիշեալ պատասխանատուն: Բանակին մէկ բանբերը ըսաւ, որ Մոհամէտ Հանսալի Համասի պիւնտր թեւին՝ «Ի պ Կ Ե տ Ի ն Ք ա ս ս մ » ի Նապլուսի ղեկավարն էր: Բանբերը աւելցոց, որ գործողութեան նպատակն էր չէկոքացնել Հանսալին: Այլ բանբեր մը յայտնեց, որ Հանսալի կրակ բացաւ պիւնտրներուն վրայ, որոնք պիւնտր պաշարած էին բնակարանի մը մէջ՝ փակելով փախուստի բոլոր ճամբաները: Բանբերը աւելցոց, որ իսրայէլացի պիւնտր մը սպաննուեցաւ եւ չորս ուրիշներ վիրաւորուեցան:

Հանսալի Համասի 12րդ անդամն է, որ անցնող մէկ շաբթուան ընթացքին սպաննուած է իսրայէլեան ուժերուն կողմէ: Իսրայէլ բաց պատերազմ յայտարարած է արմատական շարժումներուն դէմ՝ հակադրուելով պաղեստինեան կառավարութեան, որ կը նախապահուի երկիւսույթեան ու բանակցութիւններու ճամբով համոզել ծայրայեղական շարժումները՝ դադարեցնելու Իսրայէլի դէմ յարձակումները:

Վարչապետ Մահմուտ Ապպա խորհրդարանին մէջ Հինգշաբթի օր արտաստեց ձեռնմէջ վերահաստատած էր, թէ ընդհիմադիր ծայրայեղական շարժումներուն հետ պիւնտրական միջոցառումներու կարիքը չկայ, այլ՝ երկիւսույթեան: Ապպա յիշեալ յայտարարութիւնը պատճառ դարձաւ, որ իսրայէլի արտաքին գործոց նախարար Սիլվան Շալոմ «չափազանց վտանգաւոր» նկատեց պաղեստինցի վարչապետին կեցնածը: Շալոմ ըսաւ, որ Եսաթ Արաֆաթի նման Ապպա ալ կը մերժէ անդամաւտել արմատական շարժումները եւ Արաֆաթի նման ալ կը դրժէ կատարած խոստումները: Իսրայէլացի նախարարը աւելցոց, որ զօրավիզ կը կանգնի Արաֆաթը արտաքին լրագրի, որովհետեւ այնքան ատեն որ ան կ'ապրի՝ իսրայէլութեան խնջնդոս մը պիտի մնայ:

«ԱՅՍԹ» օրաթերթը հաղորդեց, որ պաղեստինեան իշխանութեան եւ Համասի միջեւ Եգիպտոսի կողմէ հովանաւորուած բանակցութիւնները ձախողութեամբ աւարտած են: (ԱՅՓ)



ՌԱՇԻՆԿԹԸՆԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԲԱՆԱԶԵԻՒՆ ԳԾՈՎ ՌՈՒՄԻԱ ՀԱՄԱԿԱՐԾԻՔ՝ ՖՐԱՆՍԱՅԻ ԵՒ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՏԵՍԱԿԷՏԻՆ

Ռուսիա երէկ միացաւ Ֆրանսայի եւ Գերմանիոյ՝ ընդգծելու համար, թէ Միացեալ Նահանգներու առաջարկած բանաձեւը ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին տակաւին աշխատանքի ու յաւելեալ մշակումի կը կարօտի: Արտաքին գործոց նախարար Իվանով ըսաւ, որ ամերիկեան բանաձեւի առաջարկը կը խօսի սկզբունքներու մասին, սակայն այդ սկզբունքները մանրամասնելու եւ յստակացնելու համար անհրաժեշտ է յաւելեալ աշխատանք տանիլ: Իվանով աւելցոց, որ ամերիկեան նախաձեռնութիւնը արժանի է ուշադրութեան, որովհետեւ կը պարունակէ կէտեր, որոնց համար Ռուսիա ժամանակէ մը ի վեր



ցոց, որ ամերիկեան նախաձեռնութիւնը արժանի է ուշադրութեան, որովհետեւ կը պարունակէ կէտեր, որոնց համար Ռուսիա ժամանակէ մը ի վեր



ըսաւ, որ նոր գործընթաց մը շարժումի մէջ գործուած է ամերիկեան նախաձեռնութեամբ, որ սակայն տակաւին նախնական վիճակի մը մէջ կը գտնուի եւ յաւելեալ մշակումի կարիքը ունի: Վարչապետ Կերիարտ Շրէտտըր եւ Ֆրանսայի նախագահ ժաք Շիրաք Հինգշաբթի զինուոր յայտարարած էին, թէ կը մերժեն ամերիկեան առաջարկը:

Շիրաք ըսած էր, որ ամերիկեան բանաձեւը գոհացում չի տար ֆրանսական կեցնածը, որ կը պահանջէ իշխանութեան արագ փոխանցումը իրաքցիներուն: Մեկնաբաններ սակայն դիտել կու տան, որ Իրաքի մէջ ապահովութեան վտանգաւոր իրավիճակը պատճառ պիտի դառնայ, որ Ֆրանսա հաստատ չմնայ մերժողական կեցնածը վրայ: Այս գծով արտաքին գործոց նախարար Տոմիտիլիտե Վիլֆէն երէկ ըսաւ, որ բանաձեւը ճիշդ ուղղութեան տանող քայլ մըն է: Ան

աւելցոց, որ Ֆրանսա չի ունի յայնամիտ մօտեցում պիտի որդեգրէ առաջարկին հանդէպ:

Ֆրանսական մամուլը սակայն Շիրաքէն կը պահանջէ հաստատ մնալ, որովհետեւ ամբողջ աշխարհը պարտաւոր չէ մաքրելու ամերիկացիներուն ու բրիտանացիներուն պատճառով իրարանցումը: Օրաթերթերէն մէկը հարց կու տար, թէ ֆրանսացի պիւնտրը իր կեանքը պիտի պահէ պարպապէս նախագահ ճորձ Պուշկովըրն տրոյթի՞նք մը սպառնալով համար:

ՀԻՔՄԱԹ ՏԻՊ ԱՅՅԵԼԵՑ Լ. Յ. Դ. «ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ԱԿՈՒՄԲ



Պապատա - Ալէյ Երեսփոխանական մասնակի ընտրութեան թեկնածու Հիքմաթ Տիպ երէկ այցելեց Լ. Յ. Դ. «Սարդարապատ» ակումբ, ուր ընդունուեցաւ Լ. Յ. Դ. Լիբանանի կեդրոնական կոմիտէի ընկերներուն կողմէ: Տիպ ներկայացոց իր աշխատանքային ծրագիրը յառաջիկայ 14 Սեպտեմբերի ընտրապայքարին գծով: Կեդրոնական կոմիտէի ընկերները շեշտեցին, որ Լ. Յ. Դ. կողմէ ուղղէ ընտրութիւնները կայացնել ժողովրդավարական միջոցով մէջ:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԸ

Նախագահ զոր. Էմիլ Լահուտ երէկ Պապատեթի մէջ ընդունեց Սրի Լանքայի արտաքին գործոց նախարար Թիրոն Ֆերնանտոն, որուն հետ քննարկեց Լիբանան - Սրի Լանքա երկկողմանի յարաբերութիւնները եւ զանոնք բարելաւելու հեռանկարները, տրուած ըլլալով 80 Լիբանանի մէջ ընկերութիւն հաստատած են շուրջ 80 հազար սրի լանքացիներ: Քննարկուեցան նաեւ շրջանային իրադարձութիւնները:

Նախագահ Լահուտի այցելեցին նաեւ երեսփոխաններ Փարսան Թոք, Մոհամէտ Եահիա, Անթուան Հատտատ, Ապպաս Հաշէմ եւ նախկին նախարար Հասան Իզէտին:

Քննարկուածի առարկայ դարձան ներլիբանանեան կեանքը շուրջ շարքեր, ինչպէս նաեւ լիբանանեան բազմաթիւ շրջաններու կարիքները:

Նախագահ Լահուտ չափաստեց, որ բարգաւաճումները պիտի ամրապնդուին ընդգծելով, որ ինք անձամբ կը հսկէ Լիբանանի մէջ հաստատարակուած բարգաւաճման ծրագրի գործադրութեան:

ՖԱՐԷՍ - ՏԱՀԵՐ ՀԱՆԴԻՊՈՒՍ

Փոխ վարչապետ Իսամ Ֆարէս երէկ ընդունեց վարչական հարցերու եւ արդարադատութեան խորհրդարանական յանձնախումբի նախագահ երեսփոխան Միխայիլ Տահէրը, որուն հետ քննարկեց տեղական իրադարձութիւնները, ինչպէս նաեւ յանձնախումբին քննարկած թղթածրարները:

Ֆարէսի այցելեց նաեւ երեսփոխան Պուրոս Հարպ, որ ներկայացուց «Ազգային ծակատ»ի կազմութեան պայմանները: Քննարկուեցան նաեւ տեղական եւ շրջանային իրադարձութիւնները:

Ֆարէսի այցելուներէն դարձաւ նաեւ երեսփոխան Մոհամէտ Եահիա, որ ներկայացուց հիւսիսային Լիբանանի կարիքները ընդհանրապէս եւ Աքքարի ու Ուատի Խալէտի կարիքները մասնաւորապէս:

ԱՅՆՔԱՆ ԱՏԵՆ ՈՐ ՄՈՒՍԱ ՍԱՏՐԻ ԱՌԵՒՆԳՄԱՆ ՀԱՐՅԸ ԿՐ ՄԵՆՅ ԱՆԼՈՅԸ

ԼԻԲԱՆԱՆ ԼԻՊԻՈՅ ՀԵՏ ՍԱՌԱԾ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԻՏԻ ԶՀԱԼԵՑՆԷ

Արտաքին գործոց նախարար Ժան Օպէյտ հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Արարական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսայի հետ: Քննարկուածի առարկայ դարձան Լիբանան - Լիպիա յարաբերութիւնները, որոնց ակնարկելով Օպէյտ շեշտեց, թէ Լիբանան երբեք պիտի չընդունի Լիպիոյ հետ ցրտացած յարաբերութիւնները «Տալիբներ», այնքան ատեն որ Իմամ Մուսա Սատրի առեւանգման հարցը կը մնայ անլուծ:

ՄԱՀԱԶԴ

- Օրդ. Անի Սարեան
- Տիկին Շողիկ Սարեան եւ դուստրը՝ Ժիլի
- Տէր եւ տիկին Գրիգոր Սարեան եւ զաւակուհի
- Տէր եւ տիկին Վարուժան Սարեան
- Տիկին Ազատուհի Տէր Պետրոսեան
- Տէր եւ տիկին Սարո Տէր Պետրոսեան
- Տէր եւ տիկին Կարէն Մկրտիչեան
- Սարեան ընտանիք
- Տէր Պետրոսեան ընտանիք
- Խուրի ընտանիք
- Մկրտիչեան ընտանիք
- Իպրահիմ ընտանիք
- Եւ համայն ազգականներ կը գումար իրենց հօր, եղբոր եւ հարազատին՝

ՎԱՐԴԳԵՍ ՍԱՐԵԱՆԻ (Ծնեալ՝ 1930ին)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 4 Սեպտեմբեր 2003, Ժեճեթուհի հիւանդանոցին մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուշարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Ուրբաթ, 5 Սեպտեմբեր, կէսօրէ ետք ժամը 2:00ին, էշրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեցալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազդ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին Ս. Յակոբ եկեղեցւոյ «Տիրան Պապիկեան» սրահին մէջ, իսկ Շաբաթ 6 եւ Կիրակի 7 Սեպտեմբերին՝ հանգուցեցալին բնակարանը, Քարաքիւն, «Սեյեկալ» փողոց, «Սիւլէյման» շէնք, Ա. յարկ:

ԴԱՄԱՍԿՈՍ ԴԱՄԱՍԿՈՍ ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Անդրանիկ Գոգանլեան եւ զաւակուհի Տէր եւ տիկին Կարպիս Գոգանլեան եւ զաւակուհի Տէր եւ տիկին Պարգեւ Ընճոյեան եւ զաւակուհի Տէր եւ տիկին Սիմոն Սիմոնի եւ զաւակուհի Տէր եւ տիկին Տիգրան Յակոբեան եւ զաւակուհի Նալչանեան ընտանիք

ՀԱՅԿԱՆՈՒԾ ԳՈԶԱՆԼԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ 31 Օգոստոս 2003ին, Մ. Նահանգներ:

Հոգեհանգ տեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 7 Սեպտեմբերին Դաւանակոսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Մ. Գառնարի:

Ներկայս ընդունիլ իբրեւ մահազդ:

ՔԱՆԻ ՍԸ ՏՈՂՈՎ

● ՎԱՐԶԱՊԵՏ Ռաֆիք Հարիրի Քորայթեմի մէջ երէկ ընդունեց երեսփոխան Ֆարէս Մուսայի, որուն հետ քննարկեց երկրին վերջին վարգաճումները:

● ՀԱՐԱՒԱՅԻՆ Լիբանանի արուարձաններուն մէջ նախանցեալ գիշեր «Ամալ» շարժումի եւ Հըզպալլայի անդամներ ունեցան զինեալ բախում մը, որ սակայն հակակշիռի տակ առնուեցաւ լիբանանեան բանակին կողմէ:

● ԽՐԴԱՐԱՆԻ Նախագահ Նեպիհ Պրորի երէկ ընդունեց հարաւային Լիբանանի կարգ մը գիւղաքաղաքներու քաղաքապետները, որոնց հետ քննարկեց համապատասխան շրջաններու կարիքները:

● ԾԻՒՆԵՐՈՒ Գերագոյն խորհուրդի փոխ նախագահ միւֆթի շէյխ Ապտի Էմիր Քապպան երէկուան իր քարոզին մէջ շեշտեց, որ Իսրայէլի միակ մտահոգութիւնը իր շահերը պահպանելն է եւ ոչ մէկ կարելիութիւն կ'ընծայէ պաղեստինցի թէ արաբ ժողովուրդին շահերուն:

● ՈՒԺԱՆԻԹԻ Եւ ջուրի հարցերու նախարար Այուպ Հըմայէտ երէկ ընդունեց Լիբանան գտնուող պահպանի իր պաշտօնակիցը՝ Ապտի Նապի Շաւլան, որուն հետ քննարկեց Լիբանան - Պահայէյն երկկողմանի յարաբերութիւնները եւ ուժանիւթի մարզին մէջ գործակցութեան ամրապնդման հեռանկարները: Հանդիպումէն ետք Հըմայէտ եւ Շաւլա յոյս յայտնեցին, որ երկու երկիրներուն առողջ փոխգործակցութեամբ յաջողութիւն կը գտնեն Լիբանան - Պահայէյն տնտեսական համաձայնագիրները:

● ԵՐԵՍՓՈՒՍԱՆ Նեպի Լահուտի զիլաւորած ժողովրդավարական վերանորոգում շարժումի մէկ պատկերակրիւնը, զիլաւորութեամբ իր նախագահին երէկ այցելեց Հըզպալլայի հոգեւոր պետ Մոհամէտ Հիւսէյն Ֆատալայի: Պատուիրակութիւնը Ֆատալայի ցաւակցութիւն յայտնեց Իրաքի կրօնապետ ալաքոյլա Մոհամէտ Պաքէր Հաքիմի սպանութեան առթիւ: Քննարկումի առարկայ դարձան նաեւ տեղական եւ շրջանային իրադարձութիւնները:

● ԵՐԵՍՓՈՒՍԱՆ Նեպի Լահուտի զիլաւորած ժողովրդավարական վերանորոգում շարժումի մէկ պատկերակրիւնը, զիլաւորութեամբ իր նախագահին երէկ այցելեց Հըզպալլայի հոգեւոր պետ Մոհամէտ Հիւսէյն Ֆատալայի: Պատուիրակութիւնը Ֆատալայի ցաւակցութիւն յայտնեց Իրաքի կրօնապետ ալաքոյլա Մոհամէտ Պաքէր Հաքիմի սպանութեան առթիւ: Քննարկումի առարկայ դարձան նաեւ տեղական եւ շրջանային իրադարձութիւնները:

ՍՏԱՑԱՆՔ

ՏՊԱԿՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸՆԵՐՈՎ

Շեղիմակ՝ ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ Տպարան ՎԱԹՈՂԻԿՈՒԹԻՒՆ ՍԵՇԻ ՏԱՆԸ ԿԻԼԻԿՈՅ Անթիլիաս-2003

նային իրադարձութիւնները:

● ԻՍՐԱՅԵԼԻ մէջ գտնուող արգելափակեալներու պարակցութեան եւ իրաւունքները պաշտպանող պալատին խորհուրդը երէկ Սուրի մէջ կատարեց զօրակցական ցուցի մը եւ պահանջեց պաղեստինցի թէ արաբ ժողովուրդին ապստամբութեան արմատները իսրայէլեան բանտերէն: Նշեալ խորհուրդի ընդհանուր քարտուղար Եահիա Մուսայի իր խօսքին մէջ վստահեցուց, որ գերիները պատարձակելու պայքարը պիտի շարունակուի մինչեւ որ

անոնք վերադարձան իրենց ապաստանները:

● ԵՐԵՍՓՈՒՍԱՆ Քասէմ Հաշէմ երէկ կատարուեցին զինուորական օժանդակելու գորակցի Լիբանանեան Դիմադրութեան նախագահ Մոհամէտ Ռաֆիքի եւ զօրակցի Լիբանանեան Դիմադրութեան նախագահ Մոհամէտ Ռաֆիքի միջեւ: Ան պահանջեց նաեւ Հասպայա եւ ժողովրդական զինուորները իրար կապող Տալաֆէ կամուրջին վերաշինութիւնը, նկատի ունենալով անոր կենսական ու կարեւոր դերը: Նշեալ, որ կամուրջը քանդուած էր իսրայէլեան ուժերի կողմէ:

● ԵՐԵՍՓՈՒՍԱՆ Ալի Խուրէյս երէկ քննադատեց բոլոր այն «ձայները», որոնք կը պահանջեն կամ կոչ կ'ուղղեն Լիբանան - Լիպիա երկկողմանի յարաբերութիւններու քարտուղարութեան: Խուրէյս շեշտեց, որ Իմամ Մուսա Սատրիի առեւանգման թղթածրարը տարւել տարի անելի կարելիութիւն կը ստանայ եւ աւելցուց, որ նշեալ թղթածրարը պիտի չփակուի մինչեւ Իմամին եւ անոր ընկերներուն ապստամբութեան արմատները իսրայէլեան բանտերէն:

● «ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ Դիմադրութեան» երեսփոխանական պլոքի նախագահ Մոհամէտ Ռաֆիքի երէկ իր կատարած յայտարարութիւններուն մէջ շեշտեց, որ Դիմադրութիւնը պիտի չթողնուի իր իրաւունքներէն: Անոր հետեւ իր քարտուղարութեան կենսական օժանդակելու գորակցի Լիբանանեան Դիմադրութեան նախագահ Մոհամէտ Ռաֆիքի միջեւ: Ան պահանջեց նաեւ Հասպայա եւ ժողովրդական զինուորները իրար կապող Տալաֆէ կամուրջին վերաշինութիւնը, նկատի ունենալով անոր կենսական ու կարեւոր դերը: Նշեալ, որ կամուրջը քանդուած էր իսրայէլեան ուժերի կողմէ:

● ՂՈՎՄԻ կուսակցութիւնը երէկ նախագահութեամբ Ժրպրան Արայիի գումարեց իր հերթական նիստը, որուն աւարտին հրատարակեց պաշտօնական հաղորդագրութիւն մը, շեշտելով, թէ պաղեստինցի իսրայէլեան տագնապը լուծելու խաղաղութեան ճանրու քարտուղարութիւնը պաղեստինցի ժողովուրդը կը մղէ իր իսկ կամքով հրաժարիլ ինթիֆատային: Հաղորդագրութիւնը կոչ ուղղեց որդեգրելու արաբական միացեալ կեցածք մը՝ պաշտպանելու համար պաղեստինեան արդար իրաւունքները, հեռու եզրիպատական միջնորդութենէն:

BOUTIQUE AREV

JAL EL DIB-CENTER OSCAR
TEL.: (04)715170 FAX: (04)713397
BOURJ HAMOUD-CENTER ARINE
TEL.: (01)254953-4
AREV@hotmail.com

ՏՈՔԹ. ԶԻՍ ՆԸԺԷՅՄ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»ԷՆ

Երեքշաբթի, 9 Սեպտեմբեր 2003, կեսօրէ ետք ժամը 3:00ին քաղաքական եւ ընկերային յայտագիրներու հաղորդակցող ՏՈՔԹ. ԶԻՍ ՆԸԺԷՅՄ պիտի պատասխանէ ՎԱՍԱՍՏԱՍԻ հարցումներուն՝ պատկերասփիւռի պատասխանները իր բացակայութեան տուն տուող պատճառներուն մասին:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «Բ. ԿԱՆԱՅԵԱՆ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲՈԼԷՃ

ՎԵՐԱՍՈՒՏ

Համազգային «Բ. Կանայեան» Երաժշտական Բոլեճի 2003-2004 տարեշրջանի արձանագրութիւնները կը սկսին 15 Սեպտեմբերին եւ կը շարունակուին մինչ օր բացի Շաբաթ օրերէն, կէսօրէ ետք ժամը 3:00էն 7:00: Վերամուտ՝ 13 Սեպտեմբեր:

ԾԱՆՕԹ. 3աւելելի մանրամասնութեան համար դիմել երաժշտանոցի քարտուղարութեան. հեռ. 01-265899 եւ 01-249375:

ՍՈՒՐԲ ՆԵՄՆ ՄԱՅՐ ԵՎԵՂԵՅՈՅ ՎԵՐԱՆՈՐՈՂՄԱՆ ԳՈՒՆՏ

Կիրակոս Թճնուկեանի մահուան քառասունընամյակի առթիւ, Սուրբ Անթոնիոս եւ ընտանիք 50,000 լ. ռ.

ՃԱՆԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆՂԷՍ

Ելոյթ կ'ունենայ **ՓՈԼ ՊԱՂՏԱՏԵԱՆ**

Մասնակցութեամբ **ԽԱԶԻԿ ՄԱԼԽԱՍԵԱՆԻ** ԵՒ ԻՐ ՆՈՒԱԳԱՆՈՒՄԻՆԵՐԻՆ

Հիւր երգիչ՝ ՄԱՆՈՒԿ ՄԻՆԱՍԵԱՆ

ՇԱԲԱԹ, 13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2003, «Նապրի Այնճար» ճաշարանին մէջ: Սակ՝ 35 եւ 40 \$

Տոմսերը ապահովել Սփիտիո Խաչիկ Մալխասեանէն, «Տիւրքեթ Եանկ»-էն եւ «Նապրի Այնճար» ճաշարանէն: Ըճ. 08 - 620590, 03 - 790623:

Haigazian University

Admission and Enrollment Fall 2003 - 2004

Now Accepting Applications! Undergraduate and Graduate Studies BA, BS, Teaching Diploma, MA & MBA

Haigazian University - Kantari, Hamra
Tel.: 01-349230/1, 01-353010/1
E-mail: admissions@haigazian.edu.lb
Or visit us at: www.haigazian.edu.lb

Valuing Higher Education

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԵՒ ԸՆՈՒՍԵՍ ՈՐՈՇՈՒՄ

Ազգային մանկապարտեզը՝ բոլոր հայ մանուկներուն

Լիբանանահայ գաղութային կեանքին նոր թափ է խանդ ներարկող անսակարկելի նախաձեռնություն մը հանդիսացաւ Ազգային Ուսումնական Խորհուրդի «Ազգային մանկապարտեզը բոլոր հայ մանուկներուն» մեկնակետով մշակուած և հրապարակուած ծրագիրը: Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեանի այս առիթով արտասանած խօսքը ու բացատրությունները արժանի են ամբողջական գնահատանքի եւ լիբրալ Կորակցութեան:

Այո՛, վերջին տարիներուն շատ բան խօսուեցաւ, գրուեցաւ եւ հրապարակուեցաւ լիբանանահայ վարժարաններու մասին: Ստեղծուեցաւ ձգնաձգ մամային կազմութիւն, հնչեցին ահապանգներ, երբեմն տեղի է երբեմն նաեւ ոչ հիմնաւորեալ: Ազգային իշխանութեան ամբողջ համակարգը ի տես այս կազմութեան, ամբողջականօրէն ըմբռնելով պահու ծանրակշիռ կացութիւնը եւ ականջալուր դառնալով արտայայտուած բոլոր մտահոգութիւններուն, առաջին հերթին ձեռնարկեց քննարկումներու լայն աշխատանքի: Կատարուեցան արտաձանաչումներ ու համապարփակ ուսումնասիրություններ, որոնք յոյսին տակ անցնող տարեշրջանին Ազգային Ուսումնական Խորհուրդը պատրաստեց համապարփակ ու ամբողջական ծրագիր եւ տարեշրջանը յայտարարեց ազգային վարժարաններու տարի: Այս իմաստով ցարկ կատարուած աշխատանքներուն հաշվեկշիռը հանգամանօրէն ներկայացուցեց առաջնորդ սրբապետը:

Վեց ազգային վարժարաններու մանկապարտեզներու կրթաթոշակը անվճար դարձնելու այս տարուան քաջարի որոշումը բնականաբար մեծ անձնատուրութիւններու եւ պարտաւորութիւններու դիմաց կը դնէ ազգային իշխանութիւնը: Բայց ամէն բանէ առաջ այս որոշումը կու գայ դառնալու հեռատես, շրջափակեց ու գաղութի ապագային նկատմամբ յստակ տեսլական ու լայն հորիզոն բացող նոր մեկնակետ մը: Այս որոշումին մէջ պէտք է տեսնել ազգային հաւաքական կեանքը առաջնորդելու ու ղեկավարման օրինակելի ընթացք մը, որ ինքնին թելադրական է եւ դաստիարակիչ:

Յետ այսու այլեւ ոչ մէկ ծնողք իր վաւակը օտար վարժարան ուղարկելու ինքնարդարացման ու ինքնապաշտպանութեան կացութեան մէջ կրնայ դնել ինքզինքը: Ոչ մէկ ծնողք կրնայ անպատասխանատու կերպով հաստատել թէ հայ դպրոցի ղեկավարութիւնը ստանձնած անհատները պարզապէս բեմերէն լուրջօրէն արտայայտութիւններով կը փորձեն ծողովուրդը ուղղել: Ոչ մէկ անհատ համարձակութիւնը կրնայ ունենալ արտայայտուելու ազգային վարժարաններու ուսումնական եւ կրթական մակարդակի մասին, եւ շատ յաճախ իր անգիտութեամբ նաեւ մթնոլորտ պղտորելու ու ազգային վարժարաններուն, իր կամայական վերաբերմունքով, նիշ տալու: Այսօր ազգային ուսումնական խորհուրդի մօտ առկայ է կրթական համակարգը մասնագիտական հիմներով ու արդի մանկավարժական նորմերով առաջնորդելու վճարակամութիւնն ու կամքը, որուն նախնական արդիւնքը ակներեւ է արդէն:

Պէտք է ըլլալ անկեղծ ու հարցերուն մօտենալ ամբողջական պարկեշտութեամբ: Մեր միջավայրին մէջ սկսած է տակաւ առ տակաւ յամենայլ գաղութային կեանքի տարբեր բնագաւառներու մէջ նկատուող թերիւները եւ սխալները նախապաշարուած, շատ յաճախ անհիմն ինչպէս նաեւ ենթակալ գործունէրու ազդեցութեամբ չափապանցուած կերպով ներկայացնելու յոռի երեւոյթ մը: Այս երեւոյթի արմատները պէտք է փնտնել օտարամտութեան տարբեր արտայայտութիւններու մէջ: Սկսած ենք, կամայ թէ ակամայ մեր արժէքներուն նկատմամբ ըլլալ յոռետես ու ստորահասել այն բոլորը որոնք մերն են եւ կամ մեր ձիգին ծնունդն են: Օրէ օր կ'աւելնայ գիտօսիկներու եւ կարծիք տուողներու խումբը եւ ասոր փոխարէն կը պակսի գործելու տրամադրուածութիւն ունեցողներու եւ հաւաքական կեանքին ներս պատասխանատուութիւն ստանձնողներու թիւը: Այս երեւոյթը ինքնին ինքնամաշումի եւ ինքնազանցման առաջնորդող գործունէ է, չըսելու համար անհատական եսին շուրջ կծկուելու եւ այդ եսին ծառայելու սխալ ընթացք: Այս բոլորը մատնանշելով պէտք է եկրակացնել թէ գաղութային կեանքը յուսարձակի տակ առնելու եւ մնալուն կերպով երեւոյթներու գնահատումը կատարելու անհրաժեշտութիւնը պէտք է նսեմացնել: Ընդհակառակն, այդ գնահատումները կարելոր են եւ կենսական ու կը մնան յառաջընթացի եւ բարեփոխման հիմնական գործոն, պայմանաւ որ անոնք հիմնուած ըլլան ճիշդ փաստարկներու ու ամբողջական տուեալներու վրայ, որպէսզի կարելի ըլլալ լուծումներուն մէջ ըլլալ իրապաշտ եւ գործնական:

Ազգային վարժարաններու այս նոր ծրագրի իրականացումը գնահատելով նաեւ պէտք է բաւարարուիլ: Այս ծրագրի գործարարութիւնը կարիքը ունի մեր ժողովուրդի ամբողջական պօրակցութեան: Իրաքանչիւր անհատ այս հարցին պէտք է մօտենայ իբրեւ գաղութային առաջնահերթութիւն եւ ըստ այնմ հունաւորէ իր ընթացքը ու ձըղէ օժանդակութեան բաժինը: Հաւաքական է պատասխանատուութիւնը, հետեւաբար հաւաքական ձիգով պէտք է արդիւնատրել նաեւ ծրագրի գործարարութիւնը: Ղեկավարութիւն եւ ժողովուրդ, իրաքանչիւր պէտք է փորձէ իր կարգին ստեղծել վարակիչ մթնոլորտ մեր միջավայրին մէջ եւ չվարանի այլեւ հրապարակաւ պախարակելու այն անհատները որոնք կը շարունակեն օտար վարժարան ուղարկելու ընթացքը ներկայացնել իբրեւ յարմարագոյն ու պատճառ լուծում: Պէտք է ըլլալ խիստ ու անպիշող:

Այո՛, այս գաղութի դերակատարութեան ուժեղացման ու անոր ճանաչալիք մասն հաւատացող իրաքանչիւր անհատ նախ պէտք է ամբողջականօրէն կարելորէ ու ընկալէ այս անհրաժեշտութիւնը: Պէտք է բացմտէ ամէն տեսակի պատճառաբանութիւն որ կրնայ վնասել նորահաս սերունդներու հայեցի կազմաւորման ու վարճացման: Լիբանանեան ընկերութեան ընտելանալու ու հոն փայլուն ապագայ փնտնելու ձանձրան նաեւ կ'անցնի ազգային դպրոցէն: Իր ժողովուրդի արժէքներով պիւնուած անհատը միայն կրնայ այս իմաստով ստանձնել համապատասխան դերակատարութիւն. այլապէս ինչպէս կարելի է պատկերացնել որ ուրիշին արժէքներով ու ժառանգութեամբ կազմաւորուած անհատը, որուն հայկական պատկանելիութիւնը կ'արտացոլայ միայն իր անունով ու մակերանունով, պիտի յաջողի այլ միջավայրի մէջ իբրեւ հայ անհատ ինքզինք պարտադրել եւ այդ ձանձրով նաեւ տեղը կանգնի մեր հաւաքական իրաւունքներուն ու թարգմանը դառնալ ժողովուրդի ակնկալութիւններուն: Այս հոգեբանութեամբ առաջնորդուող անհատները, իբրեւ ընթացքով, կրնան միայն քաջալեր հանդիսանալ օտարացումի եւ այլաւորումի:

Բնականաբար սպասելիքներն ու ակնկալութիւնները շատ են հայ դպրոցին: Անոր վերապահուած դերակատարութիւնը անփոխարինելի է: Միջավայրի ամէնօրեայ ապակախումբին, նորահաս սերունդներու դիմազանի աղաւաղման, ինչպէս նաեւ օտարացման ամէն տեսակի արտափարակ երեւոյթներու դիմաց, հայ ընտանիքի կողքին հայ դպրոցը է՝ ու կը մնայ ամուր պատուար: Մարդակերտումի ու հայկերտումի առաքելութեան լծուած հայ ուսուցիչի գործը նաեւ բոլոր ժամանակներէ աւելի կենսական է եւ միաժամանակ խիստ դժուար: Պէտք է գուրգուրալ նաեւ ուսուցիչներու բնական վրայ, պայն միշտ կենսունակ ու ուժեղ պահելու առաջդրակներով:

Պէտք է մտահան ընել նաեւ այն անհերքելի փաստը, որ անցնող ժամանակահատուածին լիբանանահայ գաղութը կրցաւ անսով տարբեր գաղութներու կրթական եւ հասարակական կեանքի հետ առնչուող բազմապիսի կարիքներուն, մասնաւորաբար շնորհիւ լիբանանահայ դպրոցին, որուն պատրաստած քատրերը արժանավայել կերպով նաեւ ստանձնեցին այդ պարտականութիւնը: Այսօր, պէտք է ընդունիլ որ այդ քատրերը սկսած են նօսարման: Պէտք է հետամուտ ըլլալ նաեւ այս առաքելութեան վերականգնման:

Հայ դպրոցի առաքելութեան ծիրէն ներս կ'իյնայ նաեւ գաղութի որակի պահպանման երաշխիքներու ապահովումը, մշակութային արժէքներու անաղարտ պահպանումը եւ վերջապէս հայութեան հաւաքական տեսլականներն ու նպատակները առօրեայ ապրումի վերածող այլապէս կարելի պարտաւորութիւնը:

Ազգային իշխանութեան «Ազգային մանկապարտեզը՝ բոլոր հայ մանուկներուն» օրինակելի որոշումը պէտք է դառնայ նաեւ իր արդիւնքով հարուստ: Յաջողութիւնը կախեալ է մեր բոլորէն:

ՅԱՎՈՐ ՀԱՒԱԹԵԱՆ

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ՎԱՂՈՒԱՆ 3ԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն

9:30.- Քաղաքական լուրեր / հայերէն

9:40.- Առաւօտեան տոմս

10:00.- Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարէն Ս. պատարագի ուղղակի ձայնագրուած

12:30.- Քաղաքական լուրեր / հայերէն

1:00.- Ազգային - յեղափոխական երգեր

2:30.- Քաղաքական լուրեր / արաբերէն

2:45.- Յունարեւ երգերու ունկնդրութիւն

4:30.- Քաղաքական լուրեր / արաբերէն

6:00.- «Քաղաքական հորիզոն» ընթացիկ շաբթուան քաղաքական զարգացումներու ներկայացում՝ վերլուծական մտեցումով

6:30.- Քաղաքական լուրեր / հայերէն

ԿՈՒՉՈՒԻՆ

●AZADKO հաստ. կարիքը ունի վարպետ առաղ-ձագործներու: Դիմել՝ 01-682470:

ԿՈՒՉՈՒԻՆ

●Վարպետ աղաման-դաշարներ՝ երեք տարուան փորձառութեամբ: Դիմել՝ հեռ. 01 - 266185 կամ 03 - 698309 թիւերով:

ԾԱՆՈՒ ԸՂՈՒՅԵՐՏ

●Այնճար, գիւղից մէջ, 4000 քառ. մէթր տարածութեամբ, ջրհոռով, կոյունդով եւ բրիքով: Ելելու համար: Դիմել՝ հեռ. 03 - 207772:

ԾԱՆՈՒ 3ԱՐԿԱԲԱՍԻՆ

●Ճամբորդութեան պատճառով, Պուրճ Լամուս, Կարպոյեան շէնքեր, 1600 քառ. մէթր, 9րդ յարկ: Դիմել՝ հեռ. 03-748050:

Orient plus
KHABAZ TRAVEL & TOURS
Touch New World

Farna
\$319

8 days - Direct Charter Flight Every Tuesday starting from 8 July

Other Destinations
Bnail Trip to Cyprus 3 Days \$190
Cyprus & Greece \$425

All prices do not include the Visa (required), Travel Insurance

BOOK THIS WEEK AND GET 15% DISCOUNT ASK FOR OUR FREE CREDIT FACILITIES

01.900598, 901598
03.258336, 256254
www.orientplus.com

السوق
السفير
السيار
السبت
الاصحاح

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Լիբանանեան երէկ-ւան օրաթերթերը լուսարձակի տակ առած են նախարարաց խորհուրդի նիստը, Արաքսի եւ Ապպաի միջեւ տիրող լարուած կացութիւնը, Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնըլտ Ռամսֆելտի անակնկալ կերպով Իրաք մեկնումը, ինչպէս նաեւ Իրաքի հարցին առնչութեամբ Պուշի կատարած կոչին գծով Ֆրանսայի եւ Գերմանիոյ որդեգրած կեցուածքները:

ՆԱԽԱՐԱՐԱՑ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՒՅԵՐ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԼՈՒՐԵՐ

«Նախար» օրաթերթը գրած է, թէ հաշիւներու եւ շահերու բաժանումի փոխադարձ վիշտումներ տեղի ունեցան նախարարաց խորհուրդի ժողովին, վերաշինութեան եւ բարգաւաճումի խորհուրդը դրուեցաւ օրէնքի սահմաններուն մէջ, իսկ բնիշխանի ապապետականացման հարցը վաւերացուեցաւ:

«Նախար» գրած է, թէ էլեկտրականութեան ընկերութեան փոխտնօրէնի կատարելու թնտեսական կարողութիւնը քակուեցաւ, իսկ միջուկէն գումարներու հարցը մնաց անլուծ: «Վերաշինութիւնն ու բարգաւաճումը» վերադարձաւ նախարարաց խորհուրդի հովանիին տակ:

«Տիար» գրած է, թէ համաձայնութիւնը հանդիսացաւ նախարարաց խորհուրդի նիստին նշանաբանը: Կարգ մը փոփոխութիւններ յառաջացան վերակառուցման եւ բարգաւաճման խոր-

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՏՕՐՈՒԱՆ 3ԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն

8:45.- «Աստղեր»

9:40.- Առաւօտեան տոմս

10:05.- «Մշակութային Լրատու» ընթացիկ շաբթուան մշակութային ձեռնարկներու ներկայացում

11:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն

3:00.- «Ծաղկատան» մանկապատանեկան յայտագիր՝ ուղղակի ձայնագրուած

հուրդի վարչաձեռնարկի եւ աշխատելու-ձեռնի մէջ, բնիշխանի հարցը լուծուեցաւ, իսկ խորհուրդի նիստը, Արաքսի եւ Ապպաի միջեւ տիրող լարուած կացութիւնը, Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնըլտ Ռամսֆելտի անակնկալ կերպով Իրաք մեկնումը, ինչպէս նաեւ Իրաքի հարցին առնչութեամբ Պուշի կատարած կոչին գծով Ֆրանսայի եւ Գերմանիոյ որդեգրած կեցուածքները:

ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ԻՐԱԿԱՐԶՈՒԹԻՒՆՆԵՐ

«Անուար»ի համաձայն, Համաս եւ Ժիհադ կը քննադատեն Ապպաի պատգամները եւ իրենց պօրակցութիւնը կը յայտնեն Արաքսի:

Ըստ թերթին, նախարարաց խորհուրդին ներկայացուած խնդրագիրով մը անոնք կը պահանջեն վստահութեան քուէն ետ առնել Ապու Մապի-նի կառավարութեան:

Թերթը դիտել տուած է, թէ Ապպաի խորհուրդը «Պիտի» թէ էլեկտրականութեան ընկերութեան փոխտնօրէնի կատարելու թնտեսական կարողութիւնը քակուեցաւ, իսկ միջուկէն գումարներու հարցը մնաց անլուծ: «Վերաշինութիւնն ու բարգաւաճումը» վերադարձաւ նախարարաց խորհուրդի հովանիին տակ:

«Տիար» գրած է, թէ համաձայնութիւնը հանդիսացաւ նախարարաց խորհուրդի նիստին նշանաբանը: Կարգ մը փոփոխութիւններ յառաջացան վերակառուցման եւ բարգաւաճման խոր-

ձայն, Շիրաք եւ Շրեյտուր կ'ընդդիմանան ամերիկեան ծրագրին, իսկ Մոսկուա յաւելեալ պայմաններ կը դնէ Իրաք պօրադարձ կելու համար: Ըստ թերթին, Ռաշիդկըն պատրաստ է լսելու Փարիզի եւ Պերիսի կարծիքները:

Ըստ «Անուար»ի, բազմապէս ուժեղ յառաջացնելու Պուշի առաջարկը կը հանդիպի Ֆրանսական-գերմանական մերժումին: Թերթը դիտել տուած է, որ փոխանցման կառավարութեան անդամներէն մէկը ըսաւ, թէ Պուշի առաջարկը Իրաքը կը վերածէ կենդանական պարտեզի:

«Անուար»նշած է, թէ Մուքթատա Սատրը կը յայտարարէ, որ ամերիկացիները կանգնած են կարգ մը ահաբեկչական գործողութիւններու ետին: Թերթը համաձայն Ռամսֆելտի Պաղտատ հասցնելուն հետ նոր յարձակումներ ծայր տուին Պաղտատի մէջ: «Տիար»ի համաձայն, երեք անձեր ձերբակալուեցան Քերքուքի մէջ յարձակումներու ձեռնարկելու յանցանքով, իսկ Ռամսֆելտ անակնկալօրէն Պաղտատ այցելեց եւ քննադատական արտայայտութիւններ ունեցաւ Իրանի եւ Սուրիոյ դէմ:

«Սաֆիր»՝ դիտել տուած է, թէ Ռամսֆելտը կը հաստատէ, որ Պաղտատի մէջ գտնուող վիճակներու թիւր բաւարար է:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՅԼ ԼՈՒՐԵՐ

Ապտալա իշխան Ռուսիա իր այցելութիւնը արարտեց քարիղի մարպի մէջ գործակցութիւն հաստատելու առնչութեամբ համաձայնագիր կնքելով, գրած է «Անուար» օրաթերթը:

Ըստ թերթին, Միացեալ Նահանգներու ուժանիւրի նախարարը դատարան ներկայացաւ էլեկտրականութեան ընդհատման հարցով:

«Տիար»ին համաձայն, Լոնտոն բացի իր Ա. կարգի պաշտօնեաներէն կը թելադրէ բոլորին հեռանալ Թեխասէն:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐՄԱՐԱՆ

ՎԵՐԱՍՈՒՏ

2003 - 2004 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Սկսած են նախկին եւ նորեկ աշակերտներու արձանագրութիւնները բոլոր դասարաններուն համար, շաբթուան բոլոր օրերը (բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն), առաւօտեան ժամը 9:00էն 1:00, կէսօրէ ետք ժամը 5:00էն 8:00:

Մուտքի քննութիւններ՝

Շինգաբքի, 18 Սեպտեմբերին, առտուան ժամը 8:00ին:

Դասերու սկիզբ՝ Միջնակարգ եւ երկրորդական 24 Սեպտեմբեր 2003

Նախակրթարան 29 Սեպտեմբեր 2003

Մանկամտուր եւ մանկապարտեզ 6 Շոկտեմբեր 2003

Դասը՝ Կայ Կաթողիկէ Մեսրոպեան բարձրագոյն վարժարան, Պուրճ Լամուս, Արաքս փողոց, հեռ. 260504: E-mail: administration@mesrobian.com

ՏՍՕՐԵՆՈՒԹԻՆ

ՉԵՐ ՏԵՍԱԿԵՏԸ ԿԱՐԵՒՈՐ Է

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»ԵՆ ԱՄԵՆ ԵՐԵՐՇՄԱՐԹԻ ԼՍԵՅԷՔ «ՏԵՍԱԿԵՏ» 3ԱՅՏԱԳԻՐԸ

Երեքշաբթի, 9 Սեպտեմբեր 2003ին, կէսօրէ ետք ժամը 5:00ին «ՏԵՍԱԿԵՏ» յայտագրին նիւթն է

«ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ ԱՆԱԿՆԿԱԼԸ»

Կը խօսին՝

ՇՂԻԿ ԽԻԻՏԱՒԵՐՏԵԱՆ ՎԵՐԱՍԻՍԵՌԵԱՆ 3ԱԿՈՐ ԼԱՏՈՅԵԱՆ 3ՈՎԻԿ ՊԵՐԹԻՉԼԵԱՆ

Յայտագրին ամբողջ տեւողութեան հեռաձայնեցը «Վանայ Չայն»՝ 241199 եւ 267657 թիւերուն, ու տուրք ձեռ կարծիքը:



Գրական Էջ

ՄՐՏԱԳՐԱՒ ՆԱՏՈՐ ՄԸ՝ «ԿԱՐ ՈՒ ԶԿԱՐ»

Պատմական, քաղաքական, ընկերային ու մշակութային փոքրիկատիպ իրադարձություններով, նակատագրական նշանակություն ունեցող դեմքերով, նախատևաբանությամբ եւ ներդրումով յաջողորմաբար պատմության կերտած յարթանակով հարուստ հայոց պատմության անկիւնադարձային ժամանակաշրջանը 20րդ դարը «100 տարի, 100 պատմութիւն» խորագրեալ հատորին մէջ ամփոփել է ետք, տարի մը չանցած Պետրոս Հանեան ընթերցողին հիամնուց իր վեցերորդ հատորը «Կար ու չկար» անուն պատմութեան ժողովածուն:

Ժամանակագրական կարգով ներկայացող դեպքերու եւ դեմքերու իրերայաջորդ օղակները եթէ կը յաջողի լոյս սփռել հարուստ ու խոնավից դարաշրջան մը քաղաքական, յեղափոխական, մշակութային, հասարակական եւ հանրային գանձազան երեւոյթներու ծալքերուն վրայ՝ շնորհիւ հեղինակին որդեգրած կուռ, առարկայական եւ պարզ ոճին, երկրորդը իր լուսարձակը կը կեդրոնացնէ յատուկ աշխարհի մը վրայ, որ մեր իրականութեան մէջ ծանօթ է Հայ դպրոց սահմանումով: Հաւաքական «յիշողութեանց թարմացում»-ին նպատակը հետապնդելու փոխառեան, ինչ որ էր պարագան պատմագրական թիրախի մը ձգտած «100 տարի, 100 պատմութիւն» հատորին, «Կար ու չկար» բարացուցակալ խորագիրով յատկանշուող պատմութեան ժողովածուն սպիտակ թուղթին վրայ կը նկատակազարկ կարկառել հեղինակին անձնական յիշողութիւնը պարագայը դրուակներու եւ քաղցր յիշատակներու ջերմ ալիքներով:

«Կար ու չկար»-ի 17 պատմութեանց ներքին ալ կը թաւալին նոյն առանցքին՝ հայ դպրոցին շուրջ: Հայ լեզուի, գրականութեան, հայոց պատմութեան ուսուցչին ու պատմութեան Պետրոս Հանեանը անբաժանելի միութիւն են անոր էջերուն միտ ու ուկորի գորութեամբ: Կարելի չէ 50ամեայ կրթական վաստակով հարուստ ուսուցիչը տարանջատել Պետրոս Հանեանի գեղարուեստական խօսքէն ու պարունակէն, որովհետեւ ուշագրաւ կեանք մը ապրած կրթական մշակուրդի ոգեկոծիչ կողմնացոյցն է նոյնանուն գրագետին: Եւ գեղեցիկն ու յուզիչը այն են այս պարագային, որ վաւերական մամուլը ենթահող կրկնակի հաւաստութեամբ կ'ամրագրէ կարոտով ու յուզումով կերպարանք ստացող հեղինակին խօսքը եւ իրերայաջորդ պատմութեան արձագանգներով կ'ամբողջացայ հատորին յատուկ աշխարհը:

Այսպէս, «Կար ու չկար»-ի պատմութեանց ներքին մեծ մասը լայն կը բացայ հեղինակին յիշողութեան վարպետութիւնը:

գոյրը՝ Բերիոյ Ազգ. Քարէն Եփփէ ձեւարանի, այլ վարժարաններու եւ Պուէնոս Այրեսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ կրթական հաստատութեան հայաբոյր աշխարհներուն վրայ, ուր Պետրոս Հանեան գործած է տարիներ շարունակ՝ իբրեւ տնօրէն եւ հայերէնաւանդ նիւթերու ուսուցիչ: 60ական թուականներու Հալեպը, իր աւանդապահ, ջերմիկ, խստաբարոյ, բայց հայատրով պարզութեամբ ու գրաչուրութեամբ, կ'երկարի մէկ պատմութեան միւսը, կը հասնի լատիկ ամերիկեան ափեր, կը ստանայ վերանորոգ գոյն ու հնչեղութիւն ընթերցողը ներգրաւելով հեքիաթային ոլորտներով յատկանշուող աշխարհի մը մէջ: Աշակերտական անմեղ ու պարզունակ չարահիւսութիւնները, «պար»ներն ու արկածային դրոյթները Պետրոս Հանեան գիրի ու պատկերի կը վերածէ պատմական հերոսներուն հոգին խորապէս ընթերցող հոգեբան գրագետի խոր հիմնութեամբ, որուն շնորհիւ այս կարն պատմութեանց կը յաջողի անցնել դրուակներու մտնել մնայուն ապրումներու եւ հոգեվիճակներու վաւերականութեամբ ու ջերմ գրաչուրութեամբ:

Պարզ, գուարթախոհ, թախծաշեշտ, քաղցր ու առիւնընդ ջերմութեան մը ալիքներով ան կը հիւսէ իր պատմութեանց: Անպատկառ, հեզասահ եւ պատկերաւոր ոճը յաւելեալ կենդանութիւն կը պարգեւ տունապէտ պատմութեան գիրի իր գրչին, որ վերտուղն ու գոյգ աշխարհները Արեւելքն ու Արեւմուտքը կը միաձուլէ իրարու, կենդանի կուռ երկխօսութեամբ սովորական անձի մը տպավորութիւն ձգող պատմական կը բարձրացնէ տիպարի պատմականութիւնը, կը տագնապի Հալեպէն մինչեւ Պուէնոս Այրես եւ այլուր տոււայտող «հայու բեկորներ»-ն նակատագրիին ի տես, կ'այլի լուռ, եւ հայ գրողի ներքին տառապանքը բերեղացեանով կը ստեղծէ իր ինքնուրոյն գիրին ժամանակը:

Արտագրաւ, յուզիչ եւ իրաւ աշխարհի մը ամբողջական իրաւունքիւնը բանի մը գուսպ ու թելադրական հատուածներուն մէջ խոսքանել է ետք, հակասական, բայց եւ տարբեր ամբողջական «Կար ու չկար» ուղեընշային խորագիրով Պետրոս Հանեան անուն պատմութեան գիրը ո'չ միայն կը պայծառակերպէ իր պատմական եւ երիտասարդ տիպարներուն ինքնագործ աշխարհը, այլեւ կը յաջողի դառնալ վկան ու վկայաբեր անձնուց սիրային, ազգային եւ մարդկային ազնիւ պարունակներուն, որոնք վարակիչ են եւ սրտագրաւ ինչպէս կեանքը, ինչպէս ոգին աշխարհի չորս ծագերուն մաքառող հայ գեղին:

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՄԻՍԱԿ ՄԵԾԱՐԵՆՑ

1908 Յուլիս 4ին, Պոլսոյ մէջ շինեցաւ հայ բանաստեղծութեան ամենէն համակրելի, քնքուշ եւ անմոռանալի դէմքերէն մէկը՝ Միսաք Մեծարենց (Մեծատուրեան), որ երկու վտիտ հատորներու մէջ ամփոփուած, բայց մնայուն կեանքի սահմանուած թերթողութիւն մը ձգեց հայ գրականութեան՝ ըլլալու համար այդ գրականութեան արեւու, գոյններով ու շունչով թափանչուած երակներէն մէկը:

1907ին լոյս կը տեսնեն իր երկու թերթողագիրքերը՝ «Միաձայն» եւ «Նոր տաղեր», որոնցմով իր անունը կը նուիրագործուի իբրեւ բանաստեղծի մը, որ նուրբ զգայնութիւններու, շղարչային գոյներու, պատկերներու, խուճկի ու ծաղիկի երգիչը եղաւ:

Իր մահէն ետք «Ոսկի արիշիւն տակ» անուն հատորին մէջ ամփոփուեցան իր անտիպ էջերը:

Միսաք Մեծարենց մէկն է այն երիտասարդ ու հանճարեղ բանաստեղծներէն, որոնք գոհ գացին թոքախտին. Պետրոս Դուրեան, Մկրտիչ Պշիկիթաշեան, Վահան Տէրեան, Մատթէոս Զարիֆեան, բոլորն ալ՝ քնարերգակ թերթողներ, որոնցմէ իւրաքանչիւրը իւրայատուկ ոճով ու խորքով երգեց բնութիւնը, կեանքն ու մահուան սարսուռը:

Մինչեւ 1908, Սահմանադրութեան հռչակումը, Պոլիս մնացող եւ գտեղծագործող (գրաքննութեան թոյլատրած սահմաններուն մէջ) գրողներու մէջ երկու ուշագրաւ դէմքեր են Միսաք Մեծարենց եւ Ինտրա (Տիրան Զրաքեան), երկուքն ալ՝ արտասուղիտ տաղանդներ, որոնք առաւելապէս մշակեցին անձնական յոյզեր եւ խոհեր արվոր տաղանդներով գրականութիւնը: Այլ տաղանդաւորներ՝ Դանիէլ Վարուժան, Միսանտալապտող գրականութիւնը: Այլ տաղանդաւորներ՝ Դանիէլ Վարուժան, Միսանտալապտող գրականութիւնը, Թուրքի Զարդարեան, Վահան Թէքեան, Գրիգոր Զօհրապթօ (Ատոմ Եարճանեան), Թուրքի Զարդարեան, Վահան Թէքեան, Գրիգոր Զօհրապթօ եւ ուրիշներ կ'ապրին ու կը ստեղծագործեն եւրոպական երկիրներու մէջ եւ կը հանդիսանան հայրենասիրական եւ ազգային ապրումներու արտայայտիչներ:

22 տարեկան վտիտ, նրբամարմին եւ տփոյն երիտասարդ մըն էր Միսաք Մեծարենց, երբ մեռաւ: Ան ծաղիկներու եւ իրիկուններու թովաւնքին մէջէն մահուան թաւաքներուն զայնցաւ սարսուռով, բայց՝ հեղուկութեամբ ու բարութեամբ, առանց թշնամութիւնի զգացողի սեւ տրամուկներով:

Մնաց պայծառ երգիչը, նկարիչն ու երաժիշտը բնութեան, կեանքի ու մահուան: Ըսինք՝ մեռաւ, աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ մաշեցաւ, ինչպէս կը մաշի լոյսը եւ ինչպէս ինք կը պատկերացնէ արդէն՝

Յնձագին գիշերն է, լոյս ու լուսին՝
Բայց լոյսն իմ հոգւոյն քիչ քիչ կը մաշի: Պ. Հ.


(«100 տարի, 100 պատմութիւն» հատորէն)

ԱՐԱՐԱՏԸ՝ ՀՈՂԻՆ ՏԱԿ



Հայաստանի անկախացումին յաջորդած զանգուածային արտագաղթի հոսանքը դէպի աշխարհի չորս ծագեր քշեց հարիւր հազարաւոր հայորդիներ: Այս դժբախտ զոհերն մէկն է երեսնաութ Դուրեան Սյրեա հասած չարածճի, ուշիմ եւ համակրելի փոքրիկն Գայիանէն, որուն զարգացումը «խաղ»-երը Պետրոս Հանեան կը պատկերացնէ «Արարտը՝ հողին տակ» սրտածնիկ պատմութեամբով:

Ստորեւ պատմութեան եզրափակիչ բաժինը:



որուն հետ, աւագանի մանուկներու յատուկ մասին մէջ: Երբ դասապահը վերջ գտաւ, եւ աշակերտները, աւագանին ելելով, շարքով ուղղուեցան դէպի լողարանները, լողանք առնելու համար, Գայիանէն ուղեց Նոր «խաղ» մը խաղալ իր ընկերներուն եւ լողի ուսուցչուհին, որ այս անգամ փոխանակ խաղ մը ըլլալու, եղաւ ողբերգութիւն մը...

Ան շարքի վերջինն էր, եւ երբ աշակերտները սկսան վար իջնել ոլորուն աստիճաններէն, ան սուսիկ-փուսիկ, գաղտագողի վերադարձաւ լողաւազան, ուր մարդ չկար այլեւս, եւ աւագանի կանաչ ջուրերը՝ թաւիչի նման փափուկ ու լուսափայլ, խաղաղօրէն կը ծփային ալիքներու հրապուրիչ մրմունջներով: Գայիանէն երջանիկ էր: Մինակ եւ յաղթական: Ան առանց տատամետիւտ արագօրէն նետուեցաւ իր հասակին երեք անգամ խորութիւն ունեցող ու բարեհամբոյր կերպով ծփացող ջուրերուն մէջ...

Վարը, երբ մարդիչը եւ ուրիշ պատասխանատուներ անդրադարձան Գայիանէնի բացակայութեան եւ շտապօրէն լողաւազան, աղջիկը արգէն երեսն ի վար կը ծփար ջուրին երեսը: շէկ մագերթ արեւածաղիկի նման փռուած էին կանաչ ալիքներուն վրայ եւ երկու թեւերը օղակաձաւ միւրճուած էին ջուրերուն մէջ, այնպիսի դիրքով, որ կարծես աղջիկը ուզած էր գրկընդխառնել սիրելի չակի մը հետ...

Շտապ օգնութիւն, հիւանդանոց, բժիշկներ եւ իրարանցում՝ անօգուտ եւ աւելորդ ջանքեր եղան: Գայիանէն խեղճամահ եղած էր այնքան փափուկ ու բարի թուացող ջուրերուն մէջ...

Բանի մը որ յետոյ, ազգային գերեզմանատան մէջ թաղեցին Գայիանէնի վտիտ մարմինը, ծանր ու ճնշիչ միանակութեան մէջ: Խեղճ, դալկադէմ եւ ճնշաբերութեան վերջին օրերուն սպասող մայրը՝ անկարող լալու, կը մարմնէր երկու ուսուցչուհիներու գրկին մէջ, մեծ մարդեր երեսն ի վար նետուած էր գերեզմանի թարմ հողերուն վրայ եւ կու լար ու կ'ողորմ սիրտ ճանկատող մենախօսութիւններով: Գլխահակ եւ անգոր կանգնած էի երիտասարդ հօր կողքին ու սրտի ճմլումով մտիկ կ'ընէի սպիտակ դագաղին վրայ թափուող հողի խուլ ու ողբազին խշրուողը, որուն յուզականութեան հաւասարող ձայն չկայ աշխարհի բոլոր ձայններուն մէջ եւ կը վերջիւնէ այն առաջին պահը, երբ Գայիանէն վագելով մտած էր տեսչութիւն:

Այլեւս պիտի չտեսնեն Արարտը,՝ ըսած էի ես, երբ տեսչարանի դրան առջեւ հրաժեշտ կու տայի Հայաստանին նոր ժամանած այս դժբախտ ընտանիքին:

Աստուած իմ, թի՛վ աշխարհը դասուրբեց այնպէս, ինչպէս որ կայ այս պահուս:

Ո՞վ տրամադրեց, որ աշխարհ այսպէս ըլլայ այս աղջնակներուն համար:

Եւ յետոյ, ո՞վ ինձի ներշնչեց այն քարացած երկմտութիւնը ըսեմ, թէ չարակամ գուշակութիւնը, անբացատրելի մաղթանք ըսեմ, թէ ծպտուած յանդիմանութիւնը, որ եւ արտասանեցի խած ու խելացի աչքերով այս աղջնակին:

Ա՛յ պիտի չտեսնես Արարտը...

Եւ ո՞վ իրեն թելադրեց ներքին այն ձայնը կամ բնագոյնական համոզումը, որով Գայիանէն պատասխանեց ինձի:

Ինքնան եմ տեսել, էնքան եմ տեսել, էլ չեմ մոռանայ...

Աշխարհի մէջ այնքան հայուհիներ կան, ծաւի կամ մեղրագոյն աչքերով այնքան սիրունիկ աղջիկներ, որոնք Արարտը տեսնելու դոյզն հնարաւորութիւնը չունին, եւ այնքան ուրիշներ, որոնք չունին զայն ո՞չ իսկ երեւակայելու կամ երագելու նուազագոյն յուզականութիւնը...

Բայց պատահեցաւ այսպէս:

